

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի  
Առանձին համարները 7 կոպեկով  
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ  
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և աօն օրերէն)  
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով  
Յայտարարութիւնները համար վճարում են  
իրաւաբանները բառին 2 կոպեկով

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻՒՎԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ

20-ՐԴ ՏԱՐԻ

## ՄՇԱԿ

### ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հրատարակվում է Թիֆլիսում, Նոյն գիրքով և Նոյն պրոպագանդայով: Մեր ստանում ենք սեփական Հեռագրերով:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՌՍԳՍԱԿՐՍՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Փամատչեկի տանը):

Կայտարարութեան ուրիշ քաղաքացիացի «ՄՇԱԿ» գրելու շատ արագ է դուրս հանեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով, բառին վճարվում է 2 կոպեկով:

«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն լրագրից ետ յայտարարութիւնները, մահացուցանները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնք համար կրկնակի է վճարվում: Մահացուցանի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Կատարինէ Աւետիսեան, Գրիգոր և Մնացական Գեորգեան, Միջայել Գրիգորեան ՓՐԻԳՈՆՈՎՆԵՐԻ, Սալոմէ Գրիգորեան Փամատչեան և Վարվարէ Գրիգորեան Թումանեան, սրտի ցաւով յայտնում են՝ առաջինը իր ամուսնու, երկրորդը իրանց հօր, իսկ մնացածները իրանց եղբոր, ԵՊՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՓՐԻԳՈՆՈՎԻ մահի մասին, որը տեղի ունեցաւ Թիֆլիսում, փետրվարի 2-ին: Հորեհետեւ կատարվեց երեքշաբթի, 4-ին փետրվարի և չորեքշաբթի, 5-ին փետրվարի, երեկոյան 6 ժամին, հանգուցեալի բնակարանում, Սերգիեվսկայա փողոցում, սեփական տանը:

Յուզարկաւորութեան հանդէսը տեղի կունենայ այսօր, հինգշաբթի, փետրվարի 6-ին, առաւօտեան 10 ժամին, հանգուցեալի բնակարանից դէպի Նորաշենի եկեղեցին:

2—2

**ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ**

Կաթողիկոսական ընտրութեան առիթով.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ընտրողական պայքար. Գատաւանական դահլիճից. Ստախոսութեան դէմ. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա. Արտաքին լուրեր.— ՀԵՌՄԱՆՈՒՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅԱՍԱՐԱՌԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Նկատողութիւններ.

**ԿԱՌՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

Տեղական «ԿԱՅՅԱՅ» լրագրին գրում են Կ. Պոլսից հետեւելով. «Նույնպէս ձեզ գրել էի, Կ. Պոլսի հայոց պատրիարքը դեռ չէր ստացել ազգային ժողովը գումարկու թղթաւորութիւնը, որպէս զի Թիւրքիայի հայոց թեմերից ընտրվեան պատգամաւորներ, որոնք պիտի գնան Էջմիածին, նոր կաթողիկոս ընտրութեան մասնակցելու համար: Այժմ այդ թղթաւորութիւնն արդէն ստացված է Բ. Գոնից, որի մասին միմիայն արուժիւնը արդէն տեղեկացրել է պատրիարքարանին, աւելացնելով որ կառավարութիւնը դէմ չէ որ թեմական պատգամաւորները երթան Էջմիածին, եթէ անհրաժեշտ համարեն: Այդպիսով խնդիրը բաւարար կերպով է վճարված:»

Եթէ «ԿԱՅՅԱՅ» լրագրի հաղորդածը ճիշդ է, այն ժամանակ կաթողիկոսական ընտրութեանը այս անգամ իր մասնակցեն Թիւրքիայի հայոց բոլոր թեմերը, ուրեմն ժողովրդի ընտրվածները և ոչ թէ ինչպէս առաջ միայն Կ. Պոլսի ազգային ժողովի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնով: Սակայն, ի հարկէ, ցանկալի է, որ ժողովուրդն ընտրէ թեմական պատգամաւորներ գիտակցութեամբ, իր միջոցով, որոշ գոյնի մարդիկ, որոշ պրոպագանդ, կաթողիկոսի անձնաւորութեան վրա որոշ հայեացք ունեցող պատգամաւորներ, և ոչ թէ իրանց փոխարէն ուղարկեն մեզ Կ. Պոլսի էֆէնդիներին:

**Պատգամաւորներ ընտրելու ժամանակ թիւրքաց հայերը պէտք է աչքի առջև ունենան թէ ինչ անձնաւորութիւն են ընտրում, առաջադէմ թէ յետադէմ ուղղութեան տէր մարդկանց, որպէս զի թեմական պատգամաւորներն էլ իրանց համոզմունքի և իրանց տուած հրահանգների համեմատ ընտրեն և Նոյն ուղղութիւն ունեցող կաթողիկոսին:**

Եթէ թիւրքաց հայերը ցանկանում են կաթողիկոսական դահլիճ վրա բազմած տեսնել իրմեանի, Սերգիեանի կամ Ալեքսանդրեանի պէս առաջադէմ մարդկանց, այն ժամանակ պէտք է ընտրեն թեմական պատգամաւորներ առաջադէմ ուղղութիւն ունեցող մարդկանցից, և ոչ թէ յետադէմ ուղղութեան պատկանող պատգամաւորներին:

Գ. Ա.

**ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ**

Մենք, Թիֆլիսում Նստածներս, վերջին երկու շաբաթվայ ընթացքում այնպիսի ռուսաբանութիւններ ենք վայելել, որոնցից, անկասկած, դուրս են գաւառներում Նստածները:

Այդ ռուսաբանութիւնները մեզ չնորհեց այն ընտրողական պայքարը, որը տեղի ունեցաւ յունվարի 26-ին և փետրվարի 2-ին:

Գծուար էր երեկային անգամ, որ Թիֆլիսի ջնած ամբողջը, մեր լոթի կիստօն, շիրաջին, մանրավաճառը, կառավարը, մշակները, թողած իրանց սովորական անշարժութիւնը, իրանց ապաստանի դէպի որ և է հասարակական գործ, կը միանան հասարակութեան ինտելիգենտ դասակարգի հետ, և եկեղեցիներում խոնաված սրբատարով կերպով կը մասնակցեն եկեղեցական ընտրութեանը: Բայց այն, ինչ անհրաժեշտ է իր, տեղի ունեցաւ:

Հարկաւոր էր միայն փետրվարի 2-ին տեսնել, թէ ինչպիսի շարժում կար ամբողջ Հաւաքարի ազգաբնակչութեան մէջ, այդ բանում համոզվելու համար: Այն եկեղեցիները, որոնք միշտ կարօտ են մնում բազմաթիւ ժողովրդի, զպրոցական դահլիճները, ուր տարիներով մի երկու տասնեակ մարդ էլ չէ հաւաքվում, վերջապէս Հաւաքարի փողոցները, որոնք կենդանութիւն են ստանում միմիայն մեծ տօներին,—բոլորն էլ այդ օրը մի առանձին կենդանութիւն էին ստացել այն անգին ժողովրդի շնորհով, որը այդ օրը հաւաքվում և խոնավում էր եկեղեցիների բազմաթիւ ընտրութեան համար: Փոքրիկ սնակներում ապրող և «աշխարհից բխաբար» հաւաքարից պարզում այդպիսի բան չէին տեսնել, զուրկներ թափանցելով ստում էին իրանց որդոց և թոռներին. «Ես էլ չէիք տեսի, տեսանք»:

Իսկ այն, ինչ որ կատարվում էր ընտրողական դահլիճներում, ընտրութեան րօպէսին,—կարող էր ոգևորել Նոյն իսկ ամենաստունախիտ մարդկանց, որոնք ոչինչ բանին չեն հաւատում: Երեկայինցէք ձեզ,—անա մի կիստօ, մի շիրաջի, մի աննչան մանրավաճառ, որի կեանքը դէլիզն է եղել միշտ լաւ իրանից մեծի առաջ և հաղթողի իրանից հարուստին, բոլորովին կերպարանախոնաված, թողած իր ստրկական լուծութիւնը և անշարժութիւնը, պաշտպանում են իրանց թեմականին, խոսում են յօգուտ այս կամ այն անձնաւորութեան, դիմադրում են մի ուրիշ ընտրութեանը, և անպատճառ, բայց անկեղծ բառերով, բողբոջում են այն բոլորի դէմ, ինչ որ իրանց կազմած կարծիքով, ատելի է և մեծասակար...

Երկար ժամանակ յունվարի 26-ի և փետրվարի 2-ի ընտրողական պայքարը չի դուրս գալ մեր յիշողութիւնից, և մենք կատարեալ իրաւունք ունենք այդ օրերի ժողովրդական ոգևորութիւնը և շարժումը համարել մի փայտն դէպք, մի ոգևորելի փաստ մեր անշարժ և մեռած կեանքի մէջ:

### ԴԱՍԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՂԻՃԻՑ

Մի քանի րօպէ դադար տալուց յետոյ դատարանը շարունակում է Նախադատը խօսք է տալիս զանգատաւորի փաստաբանին:

Փաստաբան յօսութեմ իր զանգատում, որ տուել է Սպանդարեան, մեղադրում է Մալուսեանին զրպարտութեան մէջ, 5 կէտում, այն է, որ Մալուսեան անուանել է Սպանդարեանին Զէյթունի փողերի կլանող, ամեն տեսակ չարաչործների գլխաւոր, մի մարդ, որի անունը ջընջված է հայոց մամուլի միջոց և այլն և այլն: Խաչատուր Մալուսեանի խօսքերը աւելի քան վերաբարական են, և դա ապացոյցի կարօտ չէ: «Արշակաւան» խօսքը վերաբերում է միմիայն «Նոր-Գարին», որովհետեւ միայն Սպանդար Սպանդարեանն է, որ մեղադրվում է յիշեալ կէտերի մէջ: Այդ շատ լաւ դիտել ամեն մի հայ լրագրիչները այդ մասին շատ գրեցին:

Ապա պ. փաստաբանն ասեց, որ Մալուսեանի ֆանատիկայի ծնունդ է այն, որ իր թէ Սպանդարեանի և «Նոր-Գարին» անունը ջընջված է հայոց մամուլի միջոց և վերջապէս իր ծառը մեղաւոր համարելով խաչատուր Մալուսեանին զրպարտութեան մէջ, խնդրելով դատարանին պատժել նրան 1535-ր յօդուածի համաձայն: Պ. յօսութեմ իր ծառն աւարտեց հետեւել խօսքերով. «Որովհետեւ պ. Մալուսեան ինտելիգենտ մարդ է և հասարակական յայտնի դիրք է բռնում, ուստի նրա վերաբերմամբ պէտք է դործադրել օրէնքի սահմանած պատժի ամենամեծ չափը»:

Նախադատը խօսք է տալիս պաշտպանին:

Պաշտպան յօսեց աստուրով: Նախ քան գործի էութեան անցնելը, ես չեմ կարող ցաւ չը

յայտնել, որ լրագրական և զրական հարցերը, որոնք պէտք է վճարվեն Նոյն իսկ լրագրութեան մէջ, անցնում են դատարանը: Լրագրութիւնը և հրատարակական խօսքը միջոց են տալիս երկու կողմին էլ յայտնելու իրանց կարծիքները, զրկութիւն և դէմ, և միանգամայն անհամակրելի է այն երևոյթը, որ զրոյնքը մէկը միւսին դատարան են կանչում: Երբ մասնաւոր կեանքի մէջ մէկը միւսին վիրաւորում է, ուր շատ անգամ հնար չէ լինում արդարութիւնը հրատարակ հանել, այն ժամանակ դատարանին դիմելը հասկանալի է, բայց միանգամայն անհասկանալի է, թէ ինչու մի մարդ, որը ունի իր սեփական օրգանը, որը ձեռքին գրել է բունում, լրագր կաշտմանը, անհասկանալի է, ասում ենք, որ այդպիսի մարդը, լրագրութիւնը թողած, դատարանին դիմում է: Այդ նախաբանից յետոյ, ես կանցնեմ դործի էութեան:

Ուշագրութեամբ կարդալով պ. Մալուսեանի յօդուածները, ամեն մի մարդ կը գայ այն եղբայրացութեան, որ հեղինակը մի նպատակ է ունեցել.—ցոյց տալ, որ «Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը», այդ համակրելի հիմնարկութիւնը, ընկած, մեռած զրոյնքն մէջ էր, և անա մի խումբ մարդիկ, որոնք այստեղ տալիս են «Վշակականներ» անունը, ընկերութիւնը իր կոչման բարձրութեան հասցնելու զազաւարով ոգևորված, գալիս են ժողովին և աշխատում հեռացնել ընկերութեան անդրծ դեկալագրներին: Իսկ միւս կողմից մի ուրիշ խումբ մարդիկ, որոնք անուստում են «արձագանքականներ», այդ բանն իրանց համար պատու խնդիր համարելով, վճարում են դիմադրել: Ժողովի մէջ երեւան են գալիս և մի ուրիշ խումբ մարդիկ, որոնք իրանց միայն մի նպատակ են ունում ընտրել սրան, կամ նրան: Եթէ այդ յօդուածներում կայ մի խիստ բան,—դա վերաբերում է «Արձագանքին», որը իր ձեռքը մեկնում է անարժան և անպատիւ մարդկանց:

Ապա պաշտպան խաչատուրով բաւական մասնաւոր խօսելով այն մասին, թէ ինչ է ընդհանրապէս կուսակցութիւնը, բացատրելով, թէ ինքը ինչպէս է հասկանում «զրական Արշակաւան» բառերը, աւելացրեց. «Ես միանգամայն համաձայն եմ, որ պ. Մալուսեան շատ կծու, խիստ և սարսափելի գոյնեղով է նկարագրում Արշակաւանի խումբը,—բայց թէ ինչու պ. Սպանդարեան այդ սարսափելի հայելու մէջ իր պատկերն է տեսնում,—այդ իր» պ. Սպանդարեանի գործն է: Պ. Սպանդարեան,—պէտք է արդար լինել և խոստովանել,—այսօր այնքան պարզ (ՕՒՐՈՎԵՆԵՒԵՒ) էր, որ ինքն խոստովանեց, թէ բոլոր լրագրիչները իր մասին գրել են այն, ինչի մէջ ինքը մեղադրում է պ. Մալուսեանին:

Պաշտպանն իր ծառը վերջապէս ասելով, որ ոչինչ հիմք չը կայ մեղադրելու ի. Մալուսեանին զրպարտութեան մէջ Սպանդարեանի դէմ, և խնդրեց դատարանին արդարացի մեղադրողին: Նախադատ (զիմելով Մալուսեանին). ինչ ունեք աւելացնելու ձեր պաշտպանի ասածին:

Մալուսեան. Ոչինչ չունեմ աւելացնելու:

Գրանով վերջացաւ գործի ընտրութիւնը երկու յետմ ժամի 6-ին: Միւս օրը, յունվարի 31-ին, կէսօրվայ ժամի 1-ին, նահանգական դատարանը յայտնեց իր վճիռը՝ արդարացիելով ի. Մալուսեանին:

### ՍՏԱՌՈՒԹԵԱՆ ԴԵՄ

«Արձագանք» թերթը, փետրվարի 2-ի համարում, տպագրելով անանուն թերթի խմբագրի կողմից ինձ դէմ տուած զանգատի ընտրութեան հաշիւը, ինձ վերադրում է այնպիսի խօսքեր, որ ես երբէք չեմ արտասանել դատարանում:

«Արձագանքը» ասում է. «Պ. Մալուսեան յայտարարում է վճարվելու Նոյն իսկ լրագրութեան մէջ, անցնում են դատարանը: Լրագրութիւնը և հրատարակական խօսքը միջոց են տալիս երկու կողմին էլ յայտնելու իրանց կարծիքները, զրկութիւն և դէմ, և միանգամայն անհամակրելի է այն երևոյթը, որ զրոյնքը մէկը միւսին դատարան են կանչում: Երբ մասնաւոր կեանքի մէջ մէկը միւսին վիրաւորում է, ուր շատ անգամ հնար չէ լինում արդարութիւնը հրատարակ հանել, այն ժամանակ դատարանին դիմելը հասկանալի է, բայց միանգամայն անհասկանալի է, թէ ինչու մի մարդ, որը ունի իր սեփական օրգանը, որը ձեռքին գրել է բունում, լրագր կաշտմանը, անհասկանալի է, ասում ենք, որ այդպիսի մարդը, լրագրութիւնը թողած, դատարանին դիմում է: Այդ նախաբանից յետոյ, ես կանցնեմ դործի էութեան:



ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

«Figaro» լրագրի խօսքերով, յունվարի 23-ին (փետրվարի 4-ին), կոմս կապրիվի տանը եղած ճաշի ժամանակ, Վիլհելմ կայսրը, երբ խօսք բացվեց սօցիալական հարցի մասին, ասեց, որ ինքն դիտարկում էր ունի այդ հարցի լուծումը իր ձեռքն առնել: Այս գերմանական կայսրը խօսեց անառակությունը ջնջելու վերաբերմամբ հրատարակած օրինագծի մասին: Վիլհելմ II յոյս յայտնեց, որ խիստ օրհնքը վերջ կը դնի այդպիսի երևույթներին:

Ճառի վերջում նա ցանկություն յայտնեց, որ ազգային ազատամարտ կուսակցությունը կը նպաստի իրան ժողովրդական դպրոցների վերաբերյալ օրհնքի բուժարկության ժամանակ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Եզրույթները միաբանություն են գրեթե ամբողջ ընտրությունը կը կայանայ մայիսին Հռոմում: Ընտրողական ժողովին կը նախագահէ գրեթե ամբողջ պաշտոնակատար պատեր Մարտին:

—Իտալական առաջին մինիստր մարկիզ դե-Րուզինի հիւանդացի է ինֆլուենցայով:

—Բերլինցի հեռագրում են, որ այրի կայսրուհին ինչպե՞ս է գերմանական Վիլհելմ կայսրին հրաժարվել դպրոցական օրինագծից, որովհետև այդ օրինագիծը հարցը մեծ շարժում առաջ բերեց գերմանական ժողովրդի մէջ:

—Սպանիայից երկրորդ տեղեկություններ են ստացվում. հանրապետական շարժումն այնտեղ աճում է և զորքերը կազմ ու պատրաստ են:

—«Siecle» լրագրին հաղորդում են, որ եգիպտական լեհիվը կայրեթի Ֆրանսիական ներկայացուցչին առևտրի պատիճներ է տալիս, քան անգլիական ներկայացուցչին:

—«Berl. Börsen Zeitung» լրագրի խօսքերով գերմանական կիսապաշտոնական շրջաններում դեռևս յոյս չեն կորցրել անցկացնել պարլամենտում ժողովրդական դպրոցների վերաբերյալ նոր օրհնքը, թէպէտ և դրա դէմ ձայն բարձրացրել միմեանց բողոքով: Երկուստեք ռազմական շրջաններին պատկանող անձինք, և քաղաքները իրանց պատգամաւորներին պահանջում են ամեն միջոցներ գործ դնել նոր օրհնքի դէմ:

կուլման ամենալաւ ներկայացուցիչները մեր պատերի օրհնքով Մինը, ժամանակակից առաջատոր մարդիկ, այլ ևս չենք ընդունում նրանց և չը կարծենք թէ գոյություն ունենայ մի ուրիշ, առևտրի դրական ճշմարտություն, քան այն թէ ոչ մի հասարակություն չէ կարող ապրել առողջ կենսաբան պայմաններում և անկենդան ճշմարտություններին հիման վրա...: «Ես խօսում եմ այն վարդապետության մասին, որը դուք եմ ատանալի էք մեր պատերից, որը դուք միշտ և ամեն տեղ այնքան անզգայն բարոյաբան էք. այն վարդապետության մասին, թէ կոպիտ ամբողջ, սինթորը ամբողջում է իր մէջ ժողովրդի կենսական նեարդը, հենց նա ինքն, այդ ամբողջն է ժողովուրդը ասածը. թէ ուսմիկը, հասարակության ազէտ, անդարգացած անդամը նոյնչափ իրաւունք ունի դատաւարանի և սրբազործել, խորհուրդ տալ և կառավարել, որպէս որ ունեն ինտելիգենտ փոքրամասնությունն առկա և ներկայացուցիչները...: «Միլիտը դուք ձեր ամբողջ կենսաբան մէջ գրեթե մի անգամ չէք կարող լսել ճշմարտությունը...: «Ամբողջ ոչ այլ ինչ է, թէ ոչ հում նիւթ, որ պէտք է մշակել ու ժողովուրդը դարձնել» (Կր. 125—127):

Այդպէս է խօսում առաջագէտ գործիչը: Ո՛վ պիտի մարտն այդ մտքերը: Հասարակության առաջնորդ ձեռքերը, որոնք ամեն օր գոռում են թէ պէտք է դարձանք ամբողջ մտաւոր կրթությունը, այնպիսի թշուառ մտավորություն են մասնավոր, որ միայն բաց եղած ճանապարհ են կարող դնալ: Եւ ազատամարտը պահանջները նրանց սարսափելի նեղ դրութեան մէջ են դնում: Նրանք վախում, դողում են և ցնցող պարզ ու անողորմ պահանջները հարկադրում են նրանց լաց լինել: «Ամեն ինչ քանդվեց, ամեն ինչ ձեռքից գնաց», գոռում են նրանք: Այդպիսի օրհնական ազդակներով են ուղում դիմաթափ անել պահանջ անողներին: Բայց դրանց ամենա-

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

ՊԵՏԵՐՈՎԻՑԻ, 3 փետրվարի: Պետական խորհուրդը որոշում է երդվել հասարակական գործունեության կամակերպ: Ցանկացողներին թոյլ է տրվում անմիջական յարաբերություն սկսել դատարանի հետ, առանց փաստաբանի որ և է միջնորդություն: Փաստաբանի կարգը ունեցող դիմում է երդվել հասարակական գործունեության կամակերպ: Վերջինը գործի պաշտպանությունը յանձնում է իր անդամներից մինին, և որոշում է թէ օրինական ինչ վարձ պիտի ստանայ: Ցայտարարված է, որ հրատարակում է երկրորդ և վերջին բարեգործական վիճակագր. 6 միլիոն ռուբլու: Պետերբուրգում կազմակերպվում է զվարդիական օֆիցերներից «Общество потребности»... Արդէն 650 օֆիցերներ անդամ են գրվել: Երկր կոմս Եւրեմետովի տանը բացվեց ցուցահանդէս և վաճառումն զեղարուեստական արտադրություններ և կանանց ձեռագործներ, որ նուրբը է բարձր հասարակությունը յօգուտ սովակներին: Լուսինին նայելով, կայսրուհեան մէջ բացվել գիւղատնտեսական կայարանների վերաբերյալ նախագիծը ներկայացված է պետական խորհրդին: Լուսինին նայելով, հաղորդակցություն ճանապարհների միջխտությունը, Սիբիրի երկաթուղու վերաբերությունները, վճար է գծի կառուցումը սկսել երկու կողմից: Ուրալից և Վլադիվոստոկից: Ենթադրված է այս տարի շինել 400 վերստ ճանապարհ, որի վրա կը ծախվի 50 միլիոն ռուբլու: Ամբողջ ճանապարհը շինությունը կը տևի մոտ 12 տարի:

ՕԻԿՍՍ, 3 փետրվարի: Տուլայի մոտ Գունայը բացվեց սառույցը արդէն հալվում է. սպասում են, որ այս օրերս կը սկսվի նավարկությունը:

ՀՈՍՏ, 3 փետրվարի: Վենետիկում երկի վախճանակից Չերնոզորայի իշխանի մայրը:

ԲԵՐԼԻՆ, 3 փետրվարի: Շվեդիայի թագաժառանգը, որը մի քանի օր այստեղ հիւր էր, երկի մեկնեցաւ Բերլինից:

ԲԷՂԳՐԱՎ, 3 փետրվարի: Այստեղից աքսորվեց գերմանական երկու ազատամարտ լրագիրներ թղթակից Վէյշ, որը տարածում էր Սերբիայի մասին սուտ և յուրիշ լուրեր:

Ճանր ողբերգական դրութիւնն այն է, որ այդպիսի աղաղակներից յետոյ է հաստատվում: Ոչ ոք չէ կարող պահանջել, որ նոր, իրե՛րական դրութիւնը բարձիկ գոյութիւն ունեցող հին, փտած, ժամանակին անցկացրած հասկացողութեան վրա—այսպէս են պատասխանում նրանց:—Այդ երկու դրութիւնները—հինը և նորը—չեն կարող միմեանց հետ եղբայրանալ, մի տեղ ձուլվել ոչ, ընդհակառակն, հենց որ այսօր ընդունեցիք նոր դրութիւնը, վաղը ձեր ձեռքով պիտի քանդէք հնութիւնը. ուրիշ կերպ անկարելի է: Փտած, անպէտք նիւթերի կորուստը մեծ վնաս չէ և բողոքով մտաւայնում է ստացած օգուտից:

Այդ է պակաս Սարսափահար ամբողջ շուրջներով ընդհատում է քարոզչին, հարկադրում է նրան հեռանալ անպարէլից, անպատում է նրան, շորերը պատում է: Եւ միաբան, միաձայն անուանում է նրան «ժողովրդի թշնամի»: Այդ մի անուն է, որ հոսանքի ետեւից գնացողների միակ զինքն է, թէ է ժանգոտած, ըմբացած, զէնք...

Ամբողջ դատաստան արաւ,—ոյժը նրա կողմն էր: Հնարարութիւնը թաղվեց,—դա նրա ճակատադիրն էր, երբէք նա չը պիտի հանդարտ ու անխուլ ջայլերով տուն մտնի, այլ պիտի քարկոծվի, պիտի ծածկվի խուլ տեղերում մինչև այն ժամանակ, երբ դուրս կը գայ անաւոր ոչ ժով, երբ անողորմ կերպով կը ցաւեցնէ մարդկանց, տանջանք ու շարժարանք կը պատճառէ և բաւարարություն կը պահանջէ:

«Ժողովրդի թշնամին» հալածվում է,—այդ էլ ոյժի գործն է: Նրան, այդ թշնամուն, դուրս են անում ամեն տեղից. նա այլ ևս չունի ընակաւրան, հանդուրժողական տեղ: Հաւաքվում են խոհեմները, չափաւորները, ամբողջ սերունդները: Գրանք խղճում են «ժողովրդի թշնամուն», կամենում են յետ դարձնել նրան նախկին պատիւը, դիրքը, նիւթական ապահովությունը: Օ՛, այդ բոլորը հնչտ է անել, մի քայլի գործ է, հարկա-

ՊԵՏԵՐՈՎԻՑԻ, 4 փետրվարի: Լրագիրները հաղորդում են, որ գլխավորապէս բոլոր գնդերից առանձին մասնաժողովի կարգադրութեան ներքոյ են գրվում մի-մի օբեր-օֆիցեր և երկու-երկու ղեկավար, որոնք պէտք է բաժանեն ազգայնականութեան մէջ՝ մասնաժողովի ստացած նուիրատուութիւնները:—Լրագիրները հաղորդում են, որ պետական խորհուրդը հաստատեց մուրհակների կանոնադրութեան փոփոխությունները:

ՀՈՍՏ, 4 փետրվարի: Վախճանակ է ոչ թէ Չերնոզորայի իշխանի մայրը, այլ իշխանուհի Գարինիկա իշխան Գանիէլ Ի-ի այրին:

ԱՌԷՆԻ, 4 փետրվարի: Պրէյուս ժողովրդի անաղին բաղմունքները, գրգռված լինելով այն տեղացիների դէմ, որոնք բողոքականութիւն են ընդունել, երկի ներս մտան բողոքականների եկեղեցին, ժամերգութեան ժամանակ, բռնութիւն գործ դրեցին պատուրի և աղօթողները վրա և թաւանեցին եկեղեցին: Հարկ եղաւ, որ զորքը միջամտի: Մի քանի մարդիկ ձերբակալված են:

ՊԱՐԻՋ, 4 փետրվարի: «Figaro» լրագրին Բերլինից հեռագրում են, որ այնտեղ բացված է անարխիական դաւադրութիւն և որ ձերբակալված են 60 մարդ:

ՊԵՏԵՐՈՎԻՑԻ, 4 փետրվարի: Սենատը այսօր լինեց «Южный Край» լրագրի խմբագիր Իւլի-Ֆոփիլի գանգառը, ընդդէմ խարկովի դատաստանական պալատի վճռի, որով նա դատաւարտված է 500 ռուբլի տուգանքի կամ վեց ամսայ բանտարկութեան՝ զիջամացիայի համար՝ խարկովի համալսարանի պրոֆեսոր Կրիլովի դէմ. սենատը պալատի կողմից 1213 յօդուածը խախտած լինելու համար, վճիռը փոխեց, գործի ըննութիւնը դադարեցնելով:

ԲԵՐԼԻՆ, 4 փետրվարի: Դաւադրութեան բացվելը—փաստ է. բայց ձերբակալված է ոչ թէ 60, այլ չորս մարդ: Հաստատված է, որ դաւադիրները գտնվում են Բերլինում, Համբուրգում, և Կենիգսբերգում: Պոլիցիան շարունակում է իր եռանդուն խուզարկությունները:

ՎԻԵՆՆԱ, 4 փետրվարի: «Fremdenblatt» լրագրի տեղեկություններին նայելով՝ Կրիլովի շրջանում հարկ կայ հաց մատակարար 23 համայնքներին. 1300 կալուածատէրեր՝ այլ ևս սերմ չունեն գարնանային ցանքերի համար:

ՊԵՏԵՐՈՎԻՑԻ, 2 փետրվարի: Շարունակություն

ուր է միայն ուրանալ համոզմունքի խօսքը, հարկաւոր է երկու տողով յայտարարել թէ մի քանի բան սխալ է հասկացված, մի քանի խօսք յետ է վերցնվում: Եւ այնուհետ ամեն ինչ կայ. հարստություն, երջանկություն, ապահովություն:

Բայց համոզված, քանի գործիչը այդ զգուշիկ «սովորա»-ից հարստություններն են դարձնում. նա կրկնում է, նորից ստում է այն, ինչ որ միշտ ասել է: Ոչ ոչ է ոչ, նա չի ծախի համոզմունքը, չի դաւաճանի իր մտքին ու սրտին: Նա դարձեալ նոյնն է, դարձեալ ժողովրդի թշնամի: Եւ իրան ենթարկվում է հալածանքի: Բոլոր բարեմիտները, որոնց թուտ կային մտանկ ազգականները, թողնում են նրան, հեռանում:

Եւ գնում է գործիչը: Ո՛ւր—Ամեն տեղ, ուր հարկաւոր է իր դատը պաշտպանել, իր միտքը հասկացնել, ճշմարտութիւնը ոտքի դնել: Հալածական, ատելի դարձած, շարժարժած մարդը այժմ նոր ոյժ է ստացել. այդ ոյժն այն է, որ նա այժմ մի այնպէս է: Այն, այդ հանդամները սարսափելի ոյժ է. բաղմունք հակառակորդները դրանից յետոյ պիտի իմանան թէ ինչ է միակ մնացած, բոլոր կայսերը կտրած, հեռացած մարդը, որը դուրս է գալիս իր ուժեղ խօսքը հրեւանելու: Կարծում ենք որ ճշմարտութեան յաղթանակը մտածանութիւնը ղեկավարի է դառել, որովհետև այլ ևս ոչինչ չէ կարող ստել գործիչը անձնաւորութեան դէմ, ոչ մի կերպով այլ ևս չէ կարող վնասել նրան, պատժել: Նա այժմ պիտի ակամայ ակամայ բաց անէ, լսէ...

Այսպիսի երևույթները մէջ է բացատրել Իլմին հասարակական այդ մեծ դադարաւոր: Խաւարամիտ, յետադէմ թերթերը Իլմինի ճակատին են կայրել «անբարոյական» անվանումը: Այդ վկայությունները ինքն ըստ ինքեան շատ լաւ է հասկացնում ամեն ինչ:

բարեգործական վիճակագրական 1,000 բուլլետենի տարած տոմսերի:

Table with 4 columns: № սերի, № տոմս, № սերի, № տոմս. Lists serial numbers and issue numbers.

Արանց կը հասնեն 500 և 250 բուլլետենացներ:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 4-ին

Table listing various items and their prices, including flour, oil, and other goods.

Խմբագիր-հրատարակող՝ ԳԲԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆՆԵՐԻ ԱԻԱԳԸ

Հրահրում է Թիֆլիսի 1-ին և 2-րդ զիլլայի պ.պ. վաճառականներին ընդհանուր ժողովարանի շինության մեջ:

- 1) 1891 թվին եղած ծախսի և մուտքի հաշի քննությունը.
2) Թիֆլիսում առևտրի և մանուֆակտուրայի մասնաժողովի վերաբերյալ նախագծի քննությունը.
3) Զեկուցում Թիֆլիսում առևտրական դպրոց բանալու մասին, և.
4) Առևտրականների մեջ առաջ և այդ վերջինի ընկերներն ընտրելու 1892 թվի համար:

ԹԻՖԼԻՍԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Վարչությունը

այսպես է ի գիտություն, որ ընկերության հրատարակություններից կամ միջոցով կամ ապառիկ չեն ուղարկվում գաւառները ոչ որին, իսկ կանխիկ վճարով (ոչ պակաս 5 բուլլետեն արժողություն գնողին) զիջում է լինում 20% և ճանապարհահարձակ վճարում է վարչությունը:

- 1) Գաղափարական քաջանայ, Պատասխանողի. 2) Արարատու ինքնակենսազրույթի. 3) Ընտանիքի յոյսը, Աննեսիայա. 4) Պարոնների յիշատակարանը:

Ընկերության օգտին առած պարահանդեսից զոյացաւ մուտք 517 բուլլետի և ծախս 238 բուլլետի 20 կ. ծախսը մուտքից հանելով մնում է 278 բուլլետի 80 կ., որից 20 բուլլետի ապառիկ: Վարչությունը շնորհակալութիւն է ցայտնում իշխանուհի տ. Մ. Թուրանյանին և բոլոր անձինքներին, որոնք օգնելին պարահանդես կայանալուն:

Վարչությունը խնդրում է ընկերության անդամ լինել ցանկացողներին յայտնել վարչոթք, որպէս զի ընդունել այդպիսիներին, հին անդամներից խնդրվում է անդամավճարը հասցնել վարչության:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնադր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 25 դեկտեմբերից (6 յունվարից) սկսած և փոխադարձ:

Table with 2 columns: Բաթուլից Մարսէլ, մաներով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս: Lists ship names and routes.

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ: Տօմսակների գները ուղղակի երթևեկութեան Բաթուլից դէպի Պարիզ իսկական գներից պակասեցրած են:

Տեղեկութիւնների համար ճանապարհորդներին և բեռների մասին թող բարեհաճին դիմել ընկերության ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, նախկին գներալ Տէր-Ասատուրովի սանդը, ԲԱԳՈՒՄ, Սամուէլ Դիլբարովին, Կոլիբիակինսկայա հրապարակ, և ՆՕՎՕՐՈՍԻԹՅՈՒՄ պ. Լուի Բրտօն:

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ Հ. Յ. ՕՐԲԵԼԻ

Սոլջակայա փողոց, սեփական տանը №№ 15-16
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:
18-150

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առևտրական հաշարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսուցնաւիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
ՊԵՆՆԱՐԿ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Տղաների լիակատար աղւակներով, 1-ից մինչև 10,000 բուլլետ. համար, 1% օրից մինչև 12% օր. վաճառվում է եղբայր Ծովրանօվների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ.
Тифлисть, Нагорная ул., № 9. Օտարաբարդարացիք դիմում են վերջին հասցեով С. П. Мануэляничу.
Գինն է 1 բուլլետի փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի: 68-150

Advertisement for various soap brands including 'Виктория', 'Рояль', 'Икскорнаксъ', 'Разныхъ', 'Парфюмерия', 'Роза', 'Сирень', 'Лилия', 'Олео-вазелиновое', 'Духи высшего достоинства', 'О-де-колонъ', 'О-де-бодонъ', 'Цвѣточныя', 'Въ высочайше утвержденномъ Кавказскомъ Товариществѣ Торговли Аптекарскими товарами въ Тифлисѣ и Баку.'

Advertisement for 'Ольфакторіумъ Нудиливъ' (M. I. Жирмунскаго) featuring an image of a perfume bottle and text describing its quality and availability.

Advertisement for 'ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻԱՆԴՆԱՆՈՑ' (ԲԻՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԵԱՆԻ) listing various types of soap and their prices.